Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը տարբերակված ուսուցում իրականացնելիս

Վերապատրաստող, մենթոր՝ Զեմֆիրա Ավետիսյան

Ուսուցիչ՝ Նաիրա Ղազարյան

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 2

2. Մաս 1. Օժտված երեխաների բացահայտման մեթոդները 3

3. Մաս 2. Ինչպես աշխատել օժտված երեխաների հետ 5

4. Մաս 3. Օժտվածության հետ կապված դժվարությունները 7

5. Մաս 4. Օժտված երեխաների 15 հստակ նշաններ 9

6. Մաս 5. Օժտված երեխաների հետ աշխատելու իմ փորձից 12

7. Եզրակացություն 14

8. Օգտագործված գրականություն 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի նպատակը օժտվածություն ունեցող երեխաների հետ աշխատելու առանձնահատկությունները բացահայտելը և նրանց հասարակության մեջ ապրել սովորեցնելն է:

Գերընդունակ երեխաներին «օժտված» եզրույթով անվանելու միտքը պատկանում է հոգեբան Գ. Ուիպլին[1]:

Օժտվածությունը առանձնահատկությունների և ընդունակությունների զարգացման բարձր մակարդակն է, ինչն ի հայտ է գալիս գործունեության տարբեր ոլորտներում: Մանկուց օժտված երեխաներն իրենց յուրովի մտածելակերպով աչքի են ընկնում և զարմացնում շրջապատին: Հարկավոր է ժամանակին բացահայտել նման երեխաներին և ճիշտ ուղղորդել նրանց զարգացումը:

Դեռևս չկա վերջնական և հստակ սահմանում, որը կբնորոշի օժտված երեխային, ուսումնասիրված չէ, ինչպիսի դժվարություններ է հաղթահարում օժտված երեխան շրջապատում, հասակակիցների հետ շփվելիս, ինչ մեխանիզմներով է տեղի ունենում նրա հարմարեցումը և որ պատճառներն են հանգեցնում անհարմարվողականության: Բոլոր դասարաններում էլ կա գոնե մեկ աշակերտ, որն առանձնանում է հասակակիցներից իր անսովոր մտածողությամբ, աչքի ընկնող ընդունակություններով, ներքին հնարավորություններով, բարձր արդյունքներ նվաճելու և դրանք մեկ կամ մի քանի բնագավառում կիրառելու կարողությամբ, անկախ է իր դատողություններում, ինքնավստահ է, իշխող, ըմբոստանում է ճնշման և սահմանափակումների դեմ, հարցասեր է, հետաքրքրասեր, ունի հումորի զգացում, հարուստ երևակայություն:

Յուրաքանչյուր աշակերտ ունի գիտելիքների կառուցման միայն իրեն հատուկ ձևերն ու մեթոդները, որոնք պայմանավորված են անհատի ազգային, ռասսայական, լեզվական, մշակութային, սեռային, ֆիզիկական առանձնահատկություններով:

Գիտելիքները սուբյեկտիվ բնույթ ունեն, քանի որ հենվում են աշխարհի անհատական մեկնաբանության վրա: Ինչպես որ երևույթը կարող է տարբեր կերպ ընկալվել, այնպես էլ գիտելիքների միևնույն շերտը՝ տարբեր ձևերով յուրացվել: Ուսուցչի դերը կայանում է նրանում, որ օգնի աշակերտին «կառուցելու» իր գիտելիքները:

1. «Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա» Մ. Առաքելյան 2017թ.

ՄԱՍ 1.ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Շվեյցարիացի հոգեբույժ, անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կարլ Յունգը գրում է. «Օժտվածությունը միայն բացառիկ դեպքերում է դրսևորվում համաչափ զարգացման մեջ: Հաճախ այն հակադրությունների լայն միջակայք է, որը ներքին կոնֆլիկտների և լարվածության աղբյուր է դառնում: Օժտված մարդը կենսաբանական տեսանկյունից շեղում է միջինից և, չնայած, բարձր ընդունակությունները մարդկության ծառի ամենագեղեցիկ, սակայն հաճախ վտանգավոր պտուղներից են, դրանք կախված են բարակ ճյուղերից, որոնք հեշտությամբ կարող են պոկվել»:

Դպրոցում երեխաների ընդունակությունների, պոտենցիալ հնարավորությունների բացահայտումը, զարգացումը կրթության կարևորագույն խնդիրներից մեկն է:

Օժտված երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում և մանկավարժի հատուկ որակավորում է պահանջում: Նախ պետք է նկատել երեխայի շնորհքը, հասկանալ և ըստ արժանվույն գնահատել նրա առանձնահատկությունները: Երբ ուսումնասիրում ենք հանճարեղ մարդկանց կենսագրությունները, նկատում ենք, որ յուրաքանչյուրի կյանքում էլ եղել է ինչ-որ մեկը, որը տեսել է ապագա հանճարի երևելի ընդունակությունները և հավատացել է նրա տաղանդին:

Օժտվածությունը կարող է լինել ընդհանուր և մասնավոր:Ընդհանուր օժտվածությունը դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում: Մասնավոր օժտվածությունը դրսևորվում է գործունեության նեղ շրջանակներում, օրինակ՝ մաթեմատիկայում, սպորտում, երաժշտության մեջ և այլն: Ընդհանուր օժտվածությամբ հայտնի էին Լեոնարդո դա Վինչին, ով ոչ միայն հանճարեղ նկարիչ էր, այլև՝ քանդակագործ, երաժիշտ, հեքիաթագիր, գիտական հայտնագործությունների հեղինակ և այլն, հայտնի քաղաքական լիդեր Ուինսթոն Չերչիլը, ով նաև գրականության ոլորտում Նոբելյան մրցանակակիր էր, դիմանկարիչ Սեմյուել Մորզեն, ով հայտնագործել է հեռագրական ապարատը, հայտնի Մորզեի այբուբենը և այլն:

Օժտվածությունը բացահայտելուն օգնում է միայն ճշգրիտ ուսումնասիրությունը և երեխայի անհատականության դիտարկումը ինչպես դպրոցում, այնպես էլ տանը, այսինքն՝ օժտված երեխաների կրթության կազմակերպումը պետք է սկսել ախտորոշումից, քանի որ սահմանելով վերջինիս չափանիշները՝ գծագրում ենք այն կրթական ուղին և մոտեցումները, որոնք կիրառելու ենք օժտված սովորողների հետ աշխատելիս:

Ախտորոշման համար կարելի է կիրառել դիտման, փորձագիտական գնահատման, թեստավորման, անկետավորման մեթոդները:

Դիտման մեթոդը թույլ է տալիս հետազոտել երեխայի բնական վարքը, տեղեկություններ գրանցել նրա մասին: Այս մեթոդի «չափող գործիքը» հենց դիտողն է, ուստի շատ կարևոր է, որ նա լիարժեք տիրապետի դիտման տեխնիկային:

Փորձագիտական գնահատման դեպքում ուսուցիչները, հոգեբանը, ծնողը, սոցիալական մանկավարժը երեխային գնահատելիս կարող են օգտագործել հարցարան, որում նկարագրված են 10 բնութագրիչներ (ինտելեկտուալ, ստեղծագործական, գրական, արտիստիկ, երաժշտական, տեխնիկական, շարժողական, նկարչական, սոցիալական), որոնցում դրսևորվում են երեխայի տաղանդները:

Գոյություն ունեն օժտվածության բացահայտման տարբեր թեստեր: Որոշ մասնագետների կարծիքով ինտելեկտի թեստի բարձր արդյունքները բավարար չեն անձին օժտված ճանաչելու համար: Իսկապես օժտված լինելու համար անձը պետք է լինի արդյունավետ ինտելեկտուալ, ոչ թե ունենա թեստային բարձր IQ:

1972 թվականին ԱՄՆ-ի կրթության հանձնաժողովի կողմից ներկայացված շնորհալիության սահմանումը, չնայած քննադատություններին, կիրառվում է մինչ օրս՝«Օժտված և տաղանդավոր համարվում են այն երեխաները, ովքեր դուրս են բերվում փորձառու մասնագետների կողմից և իդեմս բարձր ընդունակությունների ունեն մեծ ձեռքբերումների հասնելու ներուժ: Այդպիսի երեխաները մասնագիտացված ուսումնական ծրագրերի կարիք ունեն, որպեսզի կարողանան ռեալիզացնել իրենց հնարավորությունները»[1]:

Հոգեբանության մեջ հանդիպում է նաև հետևյալ պայմանական դասակարգումը՝ ընդունակություններ, օժտվածություն, տաղանդ, հանճարեղություն: Ընդունակությունները սերտորեն կապված են օժտվածության հետ և հանդես են գալիս որպես վերջինիս զարգացման հիմք:

Տաղանդը բացառիկ ընդունակություններն են, օժտվածության ամենաբարձր մակարդակը որևէ կոնկրետ գործունեության մեջ:

Հանճարեղությունը տաղանդի զարգացման բարձրագույն մակարդակն է՝ կապված որակապես նորի ստեղծման հետ, որի դեպքում անձի ստեղծագործական արդյունքները բացառիկ նշանակություն են ստանում:

1. «Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա» Մ. Առաքելյան 2017թ.

ՄԱՍ 2. ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Շատ արդյունավետ են ուսումնական գործընթացում կազմակերպվող համագործակցային աշխատանքները, որոնց ընթացքում երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանք ընկերների կարծիքի հետ համադրել: Խմբային աշխատանքներն ուսուցչին ավելի շատ հնարավորություններ են տալիս տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու:Ճիշտ է, այդպիսի առաջադրանքներ կազմելը, դասին պատրաստվելը շատ ժամանակ և աշխատանք է պահանջում, բայց օժտված երեխաների հետ լրջորեն աշխատանքի պատրաստ ուսուցիչը պետք է որակապես այլ մակարդակի ուսումնական նյութեր ուսումնասիրի և դասին մանրակրկիտ պատրաստված մտնի դասարան: Դասերի ժամանակ շփման բարձր մակարդակ պետք է ապահովել, օգտագործել միջառարկայական կապեր, շրջապատող իրականությունն ուսումնասիրելու նկատմամբ համակարգված մոտեցում: Չէ՞ որ խնդրի մեկնաբանման ժամանակ օժտված երեխաները ցուցաբերում են ոչ ստանդարտ մոտեցումներ , երևույթների ու գործընթացների ինքնատիպ, ավելի լայն դիտարկում: Օժտված երեխաները հարցերի պատասխանները ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք բացահայտում են ոչ ակնհայտ կապերը և գտնում են ինքնատիպ լուծումներ:

Օժտված երեխաների հետ աշխատելու արդյունավետ տարբերակներից մեկը նրանց գիտահետազոտական գործունեության մեջ ներգրավելն է, որն օգնում է ձևավորել սովորողների մեջ նոր գիտելիքներ ձեռք բերելու մոտիվացիա: Օրինակ՝ « Ես և շրջակա աշխարհը» առարկայի ժամերին կարող ենք կիրառել տարբերակված ուսուցում, անհատական մոտեցում՝ օգտագործելով աշխատանքի տարբեր մեթոդներ՝ հետազոտություն, փորձ, դիտարկում, աշխատանք գիտահանրամատչելի գրքերով: Մեծ ուշադրություն պետք է դարձնել տարբեր իրավիճակների քննարկմանը, խմբային բանավեճերին, ինքնաստուգմանը, ստեղծագործական հնարավորությունների բացահայտմանը: Երբ աշակերտը լուծում է լուրջ պրոբլեմային առաջադրանքներ, կատարում ուսումնասիրություններ, հետազոտություններ, «գաղտնիքներ» բացահայտելու ձգտումը նրան դարձնում է « հետախույզ»: Այդպիսի առաջադրանքների կատարումը դրական հույզեր, բերկրանքի զգացում է առաջացնում:

Օժտված կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս հարմար է կիրառել «Մամլո ասուլիս», «Զարմացրո՛ւ», «Զրույց տեքստի հետ»հնարները, «Հեղինակի աթոռ» մեթոդը և այլ մեթոդներ ու հնարներ, որոնք հետաքրքիր կդարձնեն դասը:

«Մամլո ասուլիս» հնարի ժամանակ աշակերտները առաջադրում են բովանդակային հարցեր :

«Զարմացրո՛ւ» հնարը աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար է և նպատակահարմար է կիրառել դասի սկզբին: Ուսուցիչը խնդիրն այնպես է ներկայացնում, որ ակնհայտը թվում է զարմանալի:

«Զրույց տեքստի հետ» հնարը նախատեսված է անհատական աշխատանքի համար, երբ աշակերտը ինքնուրույն աշխատում է տեքստի հետ՝ կատարելով առաջադրանքները:

«Հեղինակի աթոռ» մեթոդի ժամանակ հեղինակի դերում հանդես եկող աշակերտը նստում է աթոռին, դասընկերները, ուսուցիչը հարցեր են տալիս նրան՝ որպես հեղինակի:

Նպատակահարմար է հաճախ կիրառել դիդակտիկական խաղեր,որոնք հնարավորություն կընձեռնեն զարգացնելու աշակերտների ուշադրությունը, հիշողությունը, կռահունակությունը:

Օժտված աշակերտների համար կարելի է հաճախ կազմակերպել տարբեր մրցույթներ, վիկտորինաներ, ինտելեկտուալ խաղեր, առարկայական օլիմպիադաներ, որտեղ նրանցից յուրաքանչյուրը կբացահայտի իր հնարավորությունները:

Օժտված երեխաների համար շատ հետաքրքիր է նաև նախագծային աշխատանքը, որի կատարման ժամանակ սովորողները ձևակերպում են ուսումնական խնդիրը, ինքնուրույն հավաքում են անհրաժեշտ տեղեկությունները, պլանավորում են խնդրի լուծման տարբեր եղանակները, կատարում են հետևություններ, վերլուծություններ, ձևավորում են նոր գիտելիքներ և ձեռք բերում կյանքի նոր փորձ:

Օժտված սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում շատ մեծ նշանակություն ունի տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսուցման բոլոր փուլերում:

ՄԱՍ 3.ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տխուր ճակատագիր է սպասվում նրան,ով տաղանդավոր է, բայց սեփական ընդունակությունները զարգացնելու և կատարելագործելու փոխարեն,չափազանց մեծամտանում է և տրվում անգործությանն ու ինքնահիացմունքին: Այդպիսի մարդը աստիճանաբար կորցնում է մտքի պարզությունն ու սրությունը , դառնում է ներսում, ծույլ և ծածկում մարմինն ու հոգին քայքայող տգիտության ժանգով:»

Լեոնարդո դա Վինչի

Ուսումնառության ընթացքում հաճախ օժտված սովորողներին ուղեկցում են փոխհարաբերությունների դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչներն ինչպես կվերաբերվեն օժտված երեխային:

Երբեմն ուսուցիչը կարող է չնկատել սովորողի օժտվածությունը և ուշադրություն դարձնել միայն երեխայի անհաջողություններին: Օրինակ՝ միշտ բարկանալ վատ ձեռագրի, թափթփված գրելու համար: Այդ դեպքում երեխան, որին անընդհատ հանդիմանում են, դժգոհությամբ ցույց են տալիս երկրորդական վրիպումները, հարմարվում է այն մտքին, որ իր շնորհքը, իր հատուկ ընդունակությունները, որոնցով պարգևատրել է ճակատագիրը, նշանակություն չունեն և չեն գնահատվում շրջապատում: Մարդու համար շատ կարևոր է իր տաղանդի ընդունումը, հատկապես մանկության տարիներին: Նրանց հետ աշխատելիս պետք է երեխայի ընդունակությունները պահպանել, զարգացնել՝ չվնասելով անձնավորության այլ կողմերի, օրինակ՝ հուզական ոլորտի, զարգացմանը:

Օժտված երեխայի մեջ պետք չէ միայն լավ աշակերտի փնտրել, ով ունի լավ հիշողություն, տեղեկատվությունը յուրացնելու և դասակարգելու հմտություն, ձեռք բերած գիտելիքները լայնորեն կիրառելու կարողություն,քանի որ հայտնի են նաև հակառակ դեպքերը, երբ նրանք կարող են ունենալ անբարենպաստ բնութագրիչներ՝ թափթփվածություն, չարաճճիություն, կամակորություն, անհոգություն, անուշադրություն, անփութություն և այլն: Նրանք հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը, ձանձրանում են մտավոր թերբեռնվածության պատճառով: Առաջադրանքը շատ արագ կատարելով ՝ տեղում անհանգիստ շարժվում են, պառկում նստարանին՝ շեղելով

դասընկերների ուշադրությունը: Կամ էլ առաջադրանքը կատարում են նստարանի տակ սողալու կամ այլ անկարգության ընթացքում, քանի որ կարող են միաժամանակ մի քանի գործ անել:

Շատ հաճախ, օժտված երեխաները, պայմանավորված իրենց յուրահատուկ առանձնահատկություններով, հասարակության կողմից կարող են ոչ միշտ գնահատվել և հասկացվել ինչպես հարկն է: Նրանք՝ իրենց բացառիկ ընդունակությունների շնորհիվ, զարգացման մեջ շատ առաջ են անցնում իրենց հասակակիցներից (3-4 տարի և ավելի), ունենում են յուրահատուկ հետաքրքրություններ ու առանձնահատկություններ, որի հետևանքով հայտնվում են խմբից մեկուսացված վիճակում, իսկ երբեմն էլ ծաղրի են ենթարկվում իրենց հասակակիցների կողմից: Օժտված երեխաները հանդիպում են լուրջ դժվարությունների նաև հուզական, իմացական և սոցիալական զարգացումների անհամապատասխանության պատճառով, երբ անձի մի ոլորտն ավելի է զարգանում, քան մյուսը:Նշված երևույթը կարող է ունենալ անցանկալի հետևանքներ ինչպես ընդունակությունների, այնպես էլ անձի զարգացման առումով: Այստեղ շատ անելիքներ ունեն թե՛ ծնողները, և թե՛ մանկավարժները: Հակառակ դեպքում երեխայի հուզական ոլորտը թերի կմնա, նա չի ինտեգրվի հասարակությանը, ու շփման սոցիալական հմտություններ չեն ձևավորվի: Շփման անբավարարվածությունը հանգեցնում է նրան, որ երեխան հոգեբանորեն օտարանում է հասարակությունից և դառնում է ինքնամփոփ, լռակյաց, անտարբեր կամ դրսևորում է ագրեսիվություն, թշնամանք:

ՄԱՍ 4. ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ 15 ՀԱՏԱԿ ՆՇԱՆՆԵՐ

Ոչ ստանդարտ մտածողությունը և նորարարության հանդեպ ձգտումը այն պատճառներն են, որոնք այլընտրանքային կրթական միջավայրը գրավիչ են դարձնում օժտված երեխաների համար: Կարևոր է հասկանալ, որ օժտված երեխաները պարզապես խելացի չեն: Ընդունակ երեխաները խելացի են, իսկ օժտված երեխաները՝ գյուտարար, հայտնագործող:

Ահա օժտված երեխաների 15 նշանները՝

1. Նրանք խոսում են ուսուցիչների պես

Օժտված երեխաները գիտելիքներն ավելի արագ են յուրացնում, քան միջին վիճակագրական երեխաները: Լեզվական հմտություններ յուրացնելը նույնպես նրանց հեշտ է տրվում: Օժտված երեխաները լայն բառապաշար ունեն և կարող են իրենց խոսքում օգտագործել բարդ նախադասություններ:

2. Նրանք նկատում են հաջորդականությունները

Հաջորդականությունների բացահայտման հմտությունը բավականին հազվադեպ է զարգացած փոքր երեխաների մոտ, եթե, իհարկե, երեխան օժտված չէ:

3. Նրանք շատ են կարդում

Օժտված երեխաները անհավանական հետաքրքրասերներ են: Իրենց հետաքրքրասիրությունը բավարարելու համար նրանք պետք է կարդան իրենց ձեռքն ընկած յուրաքանչյուր գիրք: Այս առանձնահատկությունն առավել վառ է արտահայտվում, եթե երեխային ինչ-որ բան խիստ դուր է գալիս:

4. Նրանք շատ տաղանդավոր են

Օժտվածությունը տաղանդը նկարագրելու ևս մեկ բառ է: Որոշ երեխաներ ի ծնե տաղանդավոր են սպորտում, գիտության կամ արվեստների բնագավառում: Վառ արտահայտված տաղանդը օժտված երեխայի ակնհայտ նշան է:

5. Նրանք գերադասում են մեծերի ու իրենցից տարիքով ավագ երեխաների ընկերակցությունը

Օժտված երեխաների համար հետաքրքիր չէ շփվել իրենց հասակակիցների հետ, քանի որ նրանց մտավոր մակարդակը գերազանցում է հասակակիցների գիտելիքների պաշարին: Նրանք իրենց հասակակիցներին չեն հասկանում, կամ էլ նրանց համար հետաքրքիր չէ շփվել իրենց տարեկիցների հետ: Դրա համար էլ նրանք փորձում են շփվել տարիքով ավելի մեծ երեխաների, իրենց ուսուցիչների ու մեծահասակների հետ:

6. Նրանք շատ կենտրոնացած են

Օժտված երեխաների մեծ մասը կարողանում է կենտրոնանալ այն ամենի վրա, ինչն իրենց հետաքրքրում է: Ձանձրալի դասի ժամանակ օժտված երեխան կորցնում իր այդ ունակությունը: Դրա պատճառով սխալմամբ կարելի է մտածել, որ երեխային կենտրոնացումը դժվար է տրվում:

7. Նրանք իրենց տարիքից ավելի հասուն են

Օժտված երեխան կարող է նաև բարձր զարգացած հուզական ինտելեկտ ունենալ: Օժտված սովորողներին հաճելի չեն իրենց հասակակիցների չարաճճիությունները: Օժտված երեխաները սովորաբար հակված չեն նման վարքագիծ ցուցաբերել:

8. Նրանք ինքնատիպ են

Օժտված երեխաները կարողանում են նաև խնդիրներ լուծել: Այդպիսի երեխաները ոչ միայն այլ կերպ են մոտենում ամենօրյա խնդիրների լուծմանը, այլև կարող են մտածել ինչ-որ բան բարելավելու եղանակ:

9. Նրանք առաջնորդներ են

Իրենց հասունության, խնդիրներ լուծելու կարողության, ինչպես նաև ոչ ստանդարտ մտածողության շնորհիվ օժտված երեխաները շատ լավ առաջնորդներ են դառնում: Իհարկե, այս առաջնորդական գծերը առավել վառ արտահայտվում են, երբ երեխան գտնվում է համապատասխան միջավայրում:

10. Նրանց պետք չէ ցույց տալ ճիշտ ուղղությունը

Մինչ այլ երեխաներին ծնողները կամ ուսուցիչները բացատրում են ճիշտ վարվելու կանոնները, օժտված երեխաները միանգամից անցնում են գործի ու հետո նոր հարցեր տալիս: Կամ առհասարակ հարցեր չեն տալիս, եթե կարողանում են ինքնուրույն ամեն բան հաղթահարել:

11. Նրանք եռանդով լի են

Օժտված երեխաները միշտ շարժման մեջ են հավանաբար այն պատճառով, որ նրանց ուղեղն անընդհատ աշխատում է: Խելացի և օժտված երեխաները հաճախ շատ արագ են խոսում, երբեմն էլ՝ կակազում են: Այդպես է պատահում այն պատճառով, որ նրանք փորձում են այնպես անել, որ բառերը հասնեն մտքերի հետևից, սակայն դա նրանց այնքան էլ չի հաջողվում:

12. Նրանց պետք է միայնության մեջ ժամանակ անցկացնել

Ինչպես և երեխաների մեծ մասին, օժտվածներին նույնպես դուր է գալիս այլ մարդկանց հետ ժամանակ անցկացնել: Այնուամենայնիվ միայնությունը նրանց թույլ է տալիս իրենց մտքերի հետ միայնակ մնալ ու զարգացնել սեփական կրեատիվությունը: Օժտված երեխաներին դուր է գալիս միայնության մեջ կարդալ, գրել ու նկարել:

13. Նրանք սիրում են բնությունը

Որոշ օժտված երեխաներ, հատկապես նրանք, ում մոտ շատ բարձր են զարգացած ստեղծագործական ունակությունները, սիրում են գեղեցիկ տեսարաններն ու բնության ձայները: Նրանց հետաքրքրասիրությունն ամենից առաջ արտահայտվում է բնության գրկում:

14. Նրանց երբեմն չի հաջողվում իրացնել իրենց պոտենցիալը

Խելացի և օժտված երեխաները իրենց գրեթե ողջ մտավոր էներգիան ծախսում են իրենց դուր եկած բաների վրա: Հաճախ ստացվում է այնպես, որ նրանք հաջողում են մի ոլորտում ու անհաջողության մատնվում մյուսներում: Օժտված երեխաները երբեմն չեն կարողանում իրացնել իրենց բոլոր հնարավորությունները անուշադրության, թափթփվածության, հիասթափության կամ սովորական ձանձրույթի պատճառով:

15. Նրանց համար հետաքրքիր է սովորել

Օժտված երեխաներին այնքան է դուր գալիս սովորելը, որ դա հոբբի է դառնում: Իրենց մտավոր ունակությունների ու գիտելիքների նկատմամբ ձգտման շնորհիվ երեխան կարող է նույնիսկ կիսել իր հասակակիցների որոշակի հետաքրքրություններ:

ՄԱՍ 5. ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՄ ՓՈՐՁԻՑ

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում դասավանդել եմ մի շարք օժտված աշակերտների: Նրանց հետ աշխատելիս ունեցել եմ տարատեսակ դժվարություններ, որոնք հաղթահարել եմ բազմաբնույթ մեթոդներ, հնարներ կիրառելու արդյունքում: Ցանկանում եմ ներկայացնել բարդություններից երկուսը:

Դժվարություններից առաջինը օժտված երեխային ուշ բացահայտելն է: Քանի որ առաջին դասարան ընդունվելիս աշակերտներն ունենում են տարբեր մեկնարկային հնարավորություններ, երբեմն կարող է լավ առաջադիմություն ցուցաբերող երեխան, ով մինչ դպրոց ընդունվելը կարողանում է գրել, կարդալ, անհրաժեշտ բառապաշար օգտագործելով՝ գրական հայերենով խոսք կառուցել,մաթեմատիկական խնդիրներ լուծել, հեշտությամբ կատարում է բոլոր առաջադրանքները, իսկ օժտված երեխան կարող է փոքր անհաջողությունից հիասթափվել, դպրոց գալ տհաճությամբ: Այն աշակերտը, ում ես ուշ եմ բացահայտել, մինչ դպրոց հաճախելը նախադպրոցական որևէ հաստատություն չէր հաճախել, ծնողները նրա զարգացմամբ չէին զբաղվել: Երեխան դասընկերների հետ չէր հարմարվում, վիրավորում էր նրանց, փորձում էր դասերը խանգարել, հրաժարվում էր գրավոր աշխատանք կատարել, որովհետև մասնիկները, տառերը, թվերը տգեղ և անհամաչափ էր գրում,բանավոր խոսք կառուցելիս օգտագործում էր բարբառային, խոսակցական բառեր ու արտահայտություններ: Երբ ուղղում էի սխալները, չէր ընդունում: Տանը նրան գովում էին, որ նա խելացի է, իսկ դպրոցում՝ հանդիմանում: Նկատեցի, որ նա շատ ուշադիր է և նկատում է այնպիսի մանրուքներ, որ մյուսները չեն նկատում, ունի լավ հիշողություն և մտապահում է տեսած, լսած, կարդացած ողջ տեղեկատվությունը, վերլուծում համադրում, կիրառում այն, բանավոր հեշտությամբ կատարում է կռահունակություն պարունակող առաջադրանքներ: Հաճախ առաջարկում էի իր կարծիքն արտահայտի, բացատրի առաջադրանքների կատարման քայլաշարը, խրախուսում էի՝ չառանձնացնելով մյուսներից: Եթե սխալվում էր, ինքնուրույն էր ուղղում սխալը: Ակտիվորեն սկսեց մասնակցել խմբային աշխատանքներին: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում նա սկսեց բոլոր առարկաներից կտրուկ առաջ անցնել իր դասընկերներից: Չորրորդ դասարանում ստեղծագործական բնույթի առաջադրանքները, կռահունակություն պարունակող խնդիրները, լրացուցիչ հանձնարարությունները կատարում էր առանց դժվարության, հաճույքով՝ միշտ առաջարկելով

առաջադրանքների կատարման հետաքրքիր, ոչ ստանդարտ տարբերակներ: Դասընկերների հետ կարողանում էր համագործակցել՝ առանց իրեն գերագնահատելու:

Հաջորդ դժվարությունն ունեցել եմ գերարժեքության բարդույթով աշակերտների հետ աշխատելիս: Ընտանիքի անդամները, շրջապատը՝ նկատելով երեխայի անսովոր ունակությունները, չափից շատ փառաբանում և մեծարում են նրան, որի արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է գերարժեքության բարդույթ: Այդպիսի բարդույթով աշակերտները համոզված են, որ իրենք բոլորից խելացի են, ամեն ինչ ճիշտ են անում և չեն կարող սխալվել: Օժտված երեխաների ծնողները ր ընտանիքի անդամները ներում են այնպիսի արարքներ ու բացթողումներ,որոնք կապված են ուսման կամ այլ բննագավառների հետ: Նրանց ցանկացած ցանկություն կամ պահանջ կատարվում է, նրանց ամեն ինչ թույլատրում են: Ծնողներն իրենց երեխաների ունեցած այս կամ այն հաջողությունը, արարքները արձանագրում են որպես երեխաների մոտ դրսևորվող օժտվածության փաստ: Այդ մասին նրանք միշտ պատմում են և խոսում:Երբ որևէ աշակերտ առաջադրանքը օժտված սովորողներից լավ է կատարում կամ ավարտում է ավելի շուտ, օժտված սովորողները հոգեբանական ծանր հարված են ստանում:

Գերարժեքության բարդույթով աշակերտները երբեմն կարող են բուլինգի ենթարկել դասընկերներին: Օրինակ՝ օժտվածություն ունեցող աշակերտներիցս մեկն անընդհատ ծիծաղում էր դասընկերների սխալների կամ իր կարծիքից տարբերվող պատասխանների վրա: Նրա պահվածքից հատկապես ճնշվում էր միևնույն շենքում ապրող դասընկերը, որովհետև, բացի դպրոցից, բակում խաղալիս նույնպես ենթարկվում էր ծաղրի: Օժտվածություն ունեցող աշակերտը ցանկացած առարկայի առաջադրանք կատարում էր հեշտությամբ, բայց տեխնոլոգիայի ժամերին թղթի ծալման աշխատանքներ կատարելիս՝ օրիգամիներ պատրաստելիս, դժվարանում էր, հիասթափվում: Շենքում ապրող դասընկերը հեշտությամբ էր պատրաստում օրիգամիներ: Առաջարկում էի, որ տեխնոլոգիայի ժամերին միասին աշխատեն և օժտվածություն ունեցող աշակերտը հասկանա, որ իր ընկերը չի ծաղրում,նսեմացնում նրան, այլ հանգիստ բացատրում, օգնում է դասընկերոջը: Նշված աշակերտների ծնողների և աշակերտների հետ զրույցների,դասղեկի ժամերին համապատասխան թեմաների շուրջ աշխատելու արդյունքում աշակերտները հասկացան, որ բոլոր մարդիկ առանձնահատուկ են , ունեն ուժեղ և թույլ կողմեր, իրենց առավելությունները, ձեռք բերած գիտելիքները նպատակահարմար է օգտագործեն բարի գործեր կատարելու, միմյանց օգնելու, իրենց հաջողություններից ավելի ոգևորվելու, անհաջողություններից դասեր քաղելու ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակության հետաքրքրությունը օժտված երեխաների նկատմամբ՝ որպես ապագա ինտելեկտուալ և ստեղծագործ վերնախավի, աճում է, քանի որ ակնհայտ է դառնում, որ հասարակության բարգավաճումն ու բարեկեցությունը կախված է մարդու անձնական ռեսուրսների զարգացումից:

Օժտված երեխաների հետ աշխատանքը դժվար ,հետաքրքիր ու նուրբ գործընթաց է:Դա ուսուցիչներից պահանջում է առարկայական ու մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործում, օժտված երեխաների հոգեբանության և նրանց կրթության կազմակերպման առանձնահատկությունների իմացություն , սերտ համագործակցություն դպրոցի հոգեբանի, այլ ուսուցիչների և օժտված երեխաների ծնողների հետ: Բոլոր օժտվածներն էլ, իրենց անկրկնելիության և եզակիության հետ մեկտեղ, ունեն ինչպես հարմարման, այնպես էլ միջավայրի կողմից չընդուվելու խնդիրներ: Հանրահայտ մարդկանց կենսագրական տեղեկությունները փաստում են նրանց մեծամասնության հարմարման խնդիրներ ունենալը:

Շատ կարևոր է ժամանակին բացահայտել օժտված երեխաներին, կազմել անհատական զարգացման պլան,ստեղծել բարենպաստ պայմաններ նրանց համակողմանի զարգացման համար, խթանել շնորհալի երեխաների ստեղծագործական գործունեությունը, յուրաքանչյուր դասի ընթացքում նրանց մղել նոր գիտելիքների բացահայտմանը, աշխատանք տանել սոցիալական հմտությունների զարգացման և միջավայրում հարմարման ուղղությամբ:

Օժտվածության զարգացման բարեհաջող ընթացքի գերակշռող մեծամասնության դեպքում հիմնական կարգավորիչ գործառույթն իր վրա է վերցնում ընտանիքը: Օժտված երեխաների ծնողները պետք է ճիշտ գնահատեն իրենց երեխաների հնարավորությունները,հասկանան նրանց առանձնահատկությունները, չգերագնահատեն և չթերագնահատեն նրանց, այլ հարգեն նրանց անհատականությունը, անսահման սիրեն և դժվար պահերին աջակցեն նրանց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Նախաշավիղ 2010.3 Թ. Կարախանյան «Օժտված երեխաների բացահայտման սկզբունքներն ու մեթոդները»

2.Նախաշավիղ 2008. 1 Հ. Հարությունյան, Մ. Ավետիսյան «Օժտված երեխաների հոգեբանական օտարացվածության դրսևորումների փորձարարական հետազոտություն»

3.Առաքելյան Մ. Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա,Երևան, 2017

4.Պողոսյան Ս. Օժտվածության երևույթը Յունգի մեկնաբանություններում, Կանթեղ

գիտական հոդվ. ժողովածու, Եր., 2008, N 3, 1:

5. Бабаева Ю. Д. Динамическая теория одаренности.Москва 1997